48. ՀԵՔԻԱԹ ՏՈԼՎԱԹ-ՏՈՒՇԿՈՒՆԻ, ՄԱՐԴՈՒ ՄԸ ՈՒ ՓԱՇԱՅԻ ՄԸ

Կէղնի, չէղնի մեկ զանկին մարդըմ կէղնի։ Էդ մարդն է, զուր ունեցած-չունեցած կուտե, կխմե, կընկնի նեղութենի մեջ։ Կասե—Հ'ուր էրթամ, հ'ուր չէրթամ, հ'ելնեմ էրթամ փաշի մոտ, խնդրվիմ քանի մը խռոշ իտա ընծիկ, ժում ու ժամանակ լե իդարա էնիմ, տեսնամ ասված ի՞նչ դուռ կբանա։

Կէլնի կիգա փաշի մոտ, կխնդրվի, փաշեն էդոր թուղթըմ կբերե գրե, թե հինգ օսկու, թե տաս օսկու, կասե.— Գնա ֆլան տեխեն առ։

Մարդն է, զթուղթ կառնե, կելնի դուրս, կասե.— Ես էդա հինգ օսկով ի՞նչ պիտի էնիմ, շատ-շատ քանի մ'ավուր մեջ կուտիմ, կխըլըսի, հոկուց վերշ ի՞նչ պիտի էնեմ, ես կառնա՞մ հ'ըմնօր էրթամ, կանիմ փաշի դուռ, փարա հ'ուզիմ։

Էդոր աղեկ, տանեմ էդա մըհորի պես, մըհորըմ շինեմ, հ'ըմնօր բերեմ զարկեմ վրը թղթին, փուսուկե մը գրեմ, էրթամ փաշի ցուցուցած տեխեն վերցում փարա, հար տեսնաք իմալ կէղնի։

Կէլնի կիգա օսկերչու մոտ։ Կիտա փաշի մըհորի պես մըհորըմ շինել, հ'ըմնօր կբերե մեկ-մեկ փուսուկա, թե հինգ օսկու, թե տաս օսկու, կգրե, զմըհոր կզարկե վրեն, կառնե կէրթա, ու ուրեն փարա կառնե, կխըրճե։

Տարի մը կընցնի. էդ փաշեն կփոխվի, կէրթա ուրիշ քաղաքըմ, կկանչե զուր խազինաղար, հրսապ կտեսնա։

Կտեսնա օր ուրեն էրկու-իրեկ հարիր օսկու փուսուկա կա խազինա-

դարի մոտ։ Կասե.— Ախըր ես էդա խըդար փարա չըմ առեր ի, էդա փուսուլեկ հ՝ուստե՞ն հ՝ելավ։

Խազինադար կասե.—Խոմ ես իլավա չէրի քու վրեն, ֆլան քյասն է էկի տարի։

Կցուցու զէդ զանկին մարդ, օր տոլվաթ-դուշկունի է էղի։

Փաշեն կկանչե, կբերե զէդ մարդ, կասե.—Ֆլանքյաս, ես քզիկ հինգ օսկու փուսուլա տվի, դու էդա խըտար փարա հ՝որի՞ն իս առի։

Մարդն կասե.— Դու փաշե մ՝իս, էրկու հարիր օսկի տվեր իս ընծիկ, շա՞տ է։ Ֆլան քաղքի փաշեն օրական էրկու բեռ օսկի կցվրե վըր ֆախիր-ֆուխարին։

Փաշեն կասե.— Սուտ կասիս, օր սուտ չըս ասի, հ՝ելի հիտրաց էրթանք էդ քու ցուցուցած քաղաք, օր էն տեխի փաշեն օրական էրկու բեռ փարա ցրվեց, ղաթի ինչ օր կերեր իս ընծիկ՝ քզիկ հալալ էղնի, կբաշխիմ, թը չէ՝ զքու գլուխ զարկիմ։

Կելնին կիգան էդ քաղաք։ Կտեսնան օր հախիխաթ էդ տեխու փաշեն էրկու մեշոկ օսկի դրեր է ու կցրվե ֆախիր-ֆուխարին։

Կիդան փաշի մոտ, կասին.—Ֆլանքյաս, էդ ի՞նչ բան է էղի, օր դու օրական էրկու մեշոկ օսկի կբերես ցրվիս վըր ժողովրդյան։

Փաշեն կասե.— Կէրթանք Երզնկնու քաղաք, ասիմ, էն տեխ մոլե մը կա, օրական հինգ հարիր հեղ կելնի վըր մնարեն, աղան կիտա ու կիշնի ցած։ Գացեք զէնդոր դարդ հասկցեք, էկեք ասեք ընծիկ, օր ես լե ասեմ հ՝որին օրական էրկու մեշոկ օսկի կցրվիմ։

Փաշեն ու էդ մարդն է, կելնին ու կիտան զճամբախ հ՝առեշ ուրանց։ Կիգան Երզնկան, կտեսնան օր մոլե մը, օղորդ, օրական հինգ հարիր հեղ կելնի վըր մնարեն, աղան կիտա ու կիշնի ցած։

Կմոտենան, կհարցուն, կասին.— Տաճկներուն ադաթ հինգ հեղ պետկ է հ՝ելնեն աղան իտան, դու հ՝որի՞ օրական հինգ հարիր հեղ կելնիս։

Մոլեն կասե.—Կէրթաք Տրապիզոն ասիմ, էնտեխ դարբինըմ կա, զուր քոմուր կվառե, զէրկաթ կտաքցու, կհանե դնե վըր սալին օր ծեծե, կթողե հըմալ, կելնի դուրս։ Կիշքե, հար կդառնա կիգա, էրկաթ կպաղի, կբերե դնե կրակ տաքցու, օրական յոթ հեզ հըմալ կէնե։

Կելնին կզարկին կգան Տրապիզոն, կտեսնան օր, օղորդ, դարբին զէրկաթ կկարմրցու օր ծեծե, կթողե վըր սալին, կելնի դուրս կիշքցու, կդառնա կիգա։ Կհարցուն.— Դարբին, դու հ՝որի՞ հըմալա կէնիս։

Դարբին կասե.— Կէրթաք Տիարբքրու քաղաք ասիմ, շահել տղե մը կա, կհեծնի լուսմութե-լուսմութ կիգա քաղքի մեջ, կբերե անդին քարըմ կա, կիտա թալալի ձեռկ օր ծախե։ Թալալն է, կառնե զէդ քար,

Հար Հ՝իրկուն կօլորտի, գին կելնի թե հարիր, թե էրկու հարիր օսկի, կիտա զփարեն ինկ կառնե, զքարն կսխկե, կըլնա բերան, կհեծնի զուր ձին ու կթողե կէրթա ուր տուն։ Հասկըցեք էնդոր սապապն ի՞նչ է, էկեք ասեք ընծիկ, օր ես լե ղիմ նա օլդուղեն ասիմ ձղիկ, էրթաք։

Էդ մարդիկն է, կելնին կզարկին կիգան Տիարբեքրու քաղաք։ Կտեսնան օր, օղորդ, ջահել տղե մը լուսմութե-լուսմութ կհեծնի զուր ձին, կիգա քաղքի մեջ, կհանե ճեպեն անգին քարըմ, կիտա թալըլի ձեռկ։ Թալալ կտանե շուկի մեջ, գին կելնի թե հարիր, թե էրկու հարիր օսկի, կդառցու կբերե տղի մոտ, տղեն կիտա զփարեն, կառնե, զքար կսխկե, կըլնա բերան, կհեծնի զուր ձին ու կթողե կիգա ուր տուն։

Կմոտենան կհարցուն.— Տղա, ի՞նչ է սապապ, օր դու հըմալ կէնիս։

Տղեն կասե.— Բաղշու քաղաք ըսիմ, էնտեխ խալթաղճի մը կա, լուսմութե-լուսմութ ուր տաս աշկերտով կիգա, հար Հ՝իրկուն խալթաղըմ կշինե, օր ուտիս, չուտիս թամաշա էնիս։ Հ՝իրկուն օր կէղնի, կբերե դնե չաքուճի տակ, կսխկե, կըլնա գետին, կվերցու թալե ներս, թողե կիգա ուր տուն։ Գացեք զէնդոր նա օլդուղեն բերեք, ասիմ զիմ նա օլդուղեն, Հ՝ելեք գացեք։

Կելնեն էդ էրկու մարդ զճամբախ կիտան Հ՝առեշ ուրանց, կիգան, կիգան Բաղշու քաղաք։ Կիշքեն օր, օղորդ, լուսուն էղավ, սարաճըմ առավ զուր տաս աշկերտ, էկավ բացեց զդուքան, հար Հ՝իրկուն նստավ, խալթաղըմ շինեց, օր մարդու հավես կա իշքե։ Հ՝իրկուն օր էղավ, Հ՝ելավ զխալթաղ դրեց չաքուճի տակ, սխկեց լըցեց գետին, վերցուց թալեց ներս, փակեց զդուռ, թորկեց էկավ տուն։ Մոտեցան էդ էրկու մարդ, հարցուցին.— Ի՞նչ է սապապ, օր դու հըմալ կէնիս։

Սարաճն ասեց.—Վանա քաղաք ասեմ, խահվաճի մը կա, էրկու աչից մոտեն մատուր է, որն օր Հ՝իգա մտնի ուր խահվեն, զխահվեն կխմցու, զհաց կկերցու, վերջն օր կելնի կէրթա, կասե. «էկո, գամբոսըմ լե զարկ իմ գլխուն, թող գնա». որն օր չզարկե՝ զորով կբերե, կիտա զարկել։ Գացեք զէնդոր նա օլդուղեն բերեք ընծիկ, օր ես լե ղիմ նա օլդուղեն ասեմ, Հ՝ելնեք էրթաք։

Հ՝ելան զճամբախ տվին Հ՝առեջ ուրանց ու էկան, էկան հասան Վան։ Հարցուցին զէդ մարդու խահվեն, էկան գտան, տեսան օր մատուր մարդըմ նստուկ է խահվաճուութեն կէնե, որն օր կիգա, կկերցու, կխմցու, կելնին օր էրթան, կբերե կեռե զուր գլուխ, կասե՝ գամբոսըմ լե զարկ իմ գըլխուն, սորա թող գնա. որն օր չզարկե, զորով կիտա զարկել, սորա ճամբու կդնե էրթա։

Կհարցուն էդ խահվաճուց.— Ջանըմ, սապապ ի՞նչ է օր զքու հաց ակկերցուս, կխմցուս, սորա կասիս՝ էկեք գամրոսըմ լե զարկեք իմ գլխու վրեն, հ՝ելեք գացեք։

Խահվաճին հ՝աուչին հեղ կասե.—Ջաստված օր կսիրեք, մը հարցուցեք։

Շատ կդնին հ՝իրար, կասե.— Ես խատրրճի բաշի ենք, ընծիկ քառսուն ձի կեր։ Ավուրըմ մեկ դարվեշին մեկ գիշեր էկավ զիմ դուռ զարկեց, հ՝ելա բացի։ Ասեց՝ «Քզիկ քառսուն ոսկի կիտամ, էկո էրթանք անվերի սարըմ կա, էդա տեխ, ընծիկ քառսուն բեռ բան կա, բառցի բի, իմ տուն թափե, առ զքու փարեն ու գնա»։ Հ՝ելա առա զիմ շորիք ու գացի, գացինք անվերի սար հ՝ելանք դուրս։ Էդ դարվեշն է, ծոցեն հանեց գիրքըմ, կարդաց, կարդաց, դուռըմ բացվավ։ Մեկ լե տեսնամ ախչիկըմ հ՝ելավ դուրս, օր շուտիս, չխմիս, թամաշա էնիս։ Ախչիկ հանեց դեխդիրըմ տվեց դարվեշ, քաշեց ուր աչկ. օր քաշեց խազինե մը բացվավ, քառսուն բեռ ոսկի բառցավ, մեկ լե կարդաց, էդ դռներ փակվավ, ախչիկ գնաց ներս, մենակ զդեխդիր տվեց դարվեշի մոտ, բառցավ զուր բեռներն ու հ՝ընկավ ճամբախ, էկանք։ Էկանք ճամբու հետ, զիմ միտկ փոխեցի, ասի՝ «Ձիանկ իմ, բեռներ իմ, մշկներ իմ, հ՝որի՞ն իտամ զէդա քառսուն բեռ ոսկին, դարվեշ առնե էրթա, կանի զդարվեշ սպանեմ, առնիմ զբեռներ, էրթամ ընծիկ»։ Դարվեշն հասկցավ, դառցավ ընծիկ ասեց. «Հողածին, հ՝որի՞ զիս կսպանիս, քսան բեռ ընծիկ, քսան բեռ լե քզիկ»։ Ասի՝ թըղ էղնի։ Քիչըմ տեխ էկանք, չէ՞ հեղըմ սատանեն մտեր էր սրրտիս մեջ, միտկս փոխի, ասի՝ զդարվեշ կսպանեմ։ Դարվեշն ասեց. «Հողածին, մեկ լե հ՝որի՞ զմիտկդ փոխիր, քառսուն բեռ լե թըղ էղնի քզիկ»։ Ըսի՝ թըղ էղնի։ Էկանք քիչըմ տեխ, մեկ լե միտկս փոխվավ։ Ասի՝ վալայի, զդարվեշ կսպանեմ։ Դարվեշն ասեց. «Հողածին, հ՝որի՞ մեկ լե զմիտկդ փոխեցիր»։ Ասի՝ վալայի, զքզիկ կսպանեմ, էն դեխդիր օր իմ աչքս չքաշիս։ Զդեխդիր լե հանեց, քաշեց, աչքիս հ՝առշև ինչ խըդար խազինա օր պահուկ կեր, երևացին։ Քիչըմ տեխ գացինք, մեկ լե սիրտս փոխվավ, ասի. «Դարվեշ, օր իմ մեկել աչք չքաշիս, զքզիկ կսպանեմ, էլ ճար չկա»։ Դարվեշն ասեց. «Հողածին, ես քու պես բեբաղդ չեմ, չասիս՝ չասեց. օր քաշեմ, քու աչքեր կբռնվեն, էլ չըս տեսնա»։ Ասի. «Դու քաշե թըղ բռնվեն»։ Բերեց քաշեց, էլ զաչքերս չկըռցա բանեք, ինկ լե համբարձավ գնաց, քշի զքառսուն բեռ ոսկին, էկա իմ տուն։ Ասի՝ ինչ էնիմ, ինչ չէնիմ, էրթամ խահվե մը բանամ, էրթացող-գալացողին խեր ու խերյաթլամա էնեմ, ախըր ես անկշտում ենք, բանով չընք կշտանե։ Ընծիկ ավլադ ու թավլադ չկա, էկա խահվե մը բացի ու գալացող-էրթացողին տվի, իմալ օր դուք տեսաք։

Հոկուց օր խահվաճի հայու դարդ հասկցան, հ'ելան էկան Բաղշոս քաղքի սառաճի մոտ, ասին.—Վանա հայու դարդ էդա է, քում ի՞նչ է։

Սառաճն ասեց.—Ավուրըմ մեկ հ'ելա էկա դուքան։ Դուքան հասա չհասա, իմ մշակ էկավ ետևես, ասեց՝ ուստա, ձին ծներ է, քուռակըմ է բերի։ Հ'ելա էկա տուն։ Տեսնամ օր քուռակ չէ, էրկու տարեկան ձի, ձեռք ձգեր, պառեկ չըր հասներ, մաներ պատկերկ։ Դառցա էկա էտ, սիրուն թամքըմ շինի, շինի խըլըսա, մշակն էկավ, ասեց՝ քուռակ փիցավ։ Հ'ելա ինադ էրի, գթամք դրի չաքուճի տակ, սխկի, դրի դետին, թորկի, էկա տուն։ Հըմկա լուսուն օր կելնեմ, կիգամ դուքան, գինամ իմ քուռակ սաղ է, թամքըմ կշինեմ, հար հ'իրկուն կկանգցում. հ'իրկուն օր կէլնեմ կէրթամ, միտկս կընկնի օր իմ քուռակ փիցեր է, կդնեմ չաքուճի տակ, կսխկեմ, կըլնամ գետին, կփակեմ ղդուքնի դուռ, կդառնամ իգամ իմ տուն։ Իմ դարդ լե էդա է։

Հոկուց օր հասկցան սառաճի դարդ, հ'ելան զարկին էկան Տիարբեքիր։

Էկան Տիարբեքիր, գացին շավահեր խշրողի մոտ, ասին.—Բաղշու հայու դարդն էդա է, քում ի՞նչ է։

Տղեն ասեց.— Վախտով մենք շատ զանկին ենք։ Իմ հեր ասեց. «Լ.ո, յարան յոլդշի հետ հ'ընկերութեն չէնիս, օր հ'ընկերութեն կէնիս մըր տան ֆլան տեխ օղրմ կա, կէրթաս կախվես կխեղդվես»։ Իմ հեր մեռավ։ Ես հ'ելա գացի, քառսուն հ'ընկեր գտա, առանք մզիկ քառսուն ձի, քառսուն թֆանք ու հ'ընկանք սարեր, ավուխուշ կէնենք։ Ինչ գլուխդ ցավցում, վել հասըլ, դիմ հոր ունեցած կերա, խըլըսցուցի, հ'ընկա ֆուխարութենի մեջ։ Օրըմ լե մըր մեշ բեշ ենք էրի, ես բան չընք տվեր է, հ'ելանք մըր հ'ընկերներու հետ գացինք սար։ Իմ հ'ընկերտանք ասին՝ տղա, հ'էսօր եմակ էփելու դոր քումն է։ Ես լե գացի էփեցի, հավու ճըռնեն բըրդուճըմ կտրի, դրի իմ բերան։ Օր կտրի դրի իմ բերան, հ'ետևանց իմ հ'ընկեր ճըլոթըմ հայ-հայ վզիս։ Ասեց.«Գինաս փարեն ինկ է տվի»։ Էդ խոսկի վրեն ասի՝ ես էլ զապրելն ինչ կէնեմ, հ'ելա էկա իմ հոր ախբրդրոշ դուքան, առա շըրիդըմ, գացի։ Էն տեխն օր իմ հեր ցուցուցեր էր, թալի հալխից, էձգեցի վիզս, օր խեղդվենք։ Զարկի օտկով զաթոռկ, տվի դեն օր խեղդվեմ, մեկ լե իշքեմ, գունդըմ ու հալխի տախտակ փըրթան, էկան ցած։ Գեժտան գեժ խելքս օր էկավ գլուխս հ'ելնամ բանամ իշքեմ, ինչ իշքեմ, աղեկ է, իշքեմ օր հ'ըմեն անգին քար ին։ Մեկ քար բերի ծախեցի, բռնեց հինգ հարիր օսկի։ Քանի մը քար ծախեցի, զիմ հ'ըմեն բան հ'առշին հեղվան պես դրստեցի։ Զէդ օր տեսան իմ հ'ընկերներ, սազեցին ընծիկ մոտենալ, ես հ'երես չտվի։ Ինչ էնեմ աղեկ է, օրական մեկ քար բերի տվի թալալի ձեռք, ծախեց, գին օր էկավ վրեն,

ես չթողի ուրիշին իտեր, տվի զթալալչեկն ու զգին առա իմ հ՝ընկերներու աչկի հ՝առեշ սխկեցի, թալի իմ բերան։ Իմ հ՝ընկերներն է, զէդ օր տեսան, օրական հատըմ քրպեն պատռավ, հըմկա եռսունութ հատն պատռեր ին, մանցեր ին էրկու հատ։

Վաղ, մեկլօր լե էնդոնկ կպատռեն, կնստեմ իմ քեֆով կուտեմ ու կխմեմ, իմ դարդ լե էդա է։

Ջջավահիր ծախողի դարդն օր հասկցան, հ՝ելան ղճամբախ տվին հ՝առեշ, էկան Տրապիզոն։

Գացին դարբնի դուքան, տեսան օր ավալկու պես զէրկաթ կտաքցու, դնե վըր սալին, կվազնե դուրս ու կիգա կըռանըմ զարկե։

Ասին.—Դարբին, ջավահիր ծախողի դարդն էդա է, քումն ի՞նչ է։

Դարբինն ասեց.— Ավուրըմ մեկ լուսմութ էկա զիմ դուքնի դուռ բացի, իշքեմ տեսնամ օր ըռընճբրի մը մեկ, գերնդին մեկ ձեռկ, խազըմ լե մեկ ձեռկ, առավ մտավ ներս, ասեց. «Ուստա, առ զէդա խազ քզիկ, զիմ գերնդին սազե, տուր տանեմ»։ Առա զխազ, տվի աշկերտու ձեռկ, ասի՝ տղա, առ գնա զէդա տուն, տուր թըղ էփեն, կբերենք կեսօրվան կուտենք։ Տղեն է, կառնե կէրթա, կիտա էփել, կէսօր օր կէղնի, կէրթա կառնե կիգա, վազիրի կնիկ էրկուհոգով կէղնի, կիգա հ՝ռաստ, կասե. «Տղա, հինգ օսկի իտամ, զէգրա ճուռ տուր ընծիկ»։ Տղեն կասե. «Չըմ իտա»։ Վազիրի կնիկ կասե. «Էրփըմ օսկի կիտամ»։ Տղեն կասե. «Իմ չէ, իմ ուստին է, ճամբե հ՝իգա մոտ, բալքեմ անփարա լե կիտա»։ Վաղրի կնիկ զմշակ ճամբեց էկավ իմ մոտ, ասեց. «Խուրճու մը աչք օսկի կիտամ, թըղ խազու ճուռ իտա ընծիկ, ուտիմ. նեղած կշտով իմ»։ Իմ ագահութեն բռնեց, ասի. «Խուրճի մը օսկի չի տա, չըմ իտա»։ Հար գացին էկան, վաղրի կնիկ ղճիժ հ՝ընցուց, հավես գնաց։ Էդա յոթ տարի խազ դրուկ է փրկսի հ՝ետև, չաքուճըմ կզարկիմ, կթռնեմ կելնեմ դուրս՝ թե վազերի կնիկ չէկա՞վ։ Իմ դարդ լե էդա է։

Կէլնեն հոնկուց, կիգան Երզնկու քաղաք, մոլին կասեն.—Դարբնի դարդ էդա է, քում ի՞նչ է։

Մոլեն կասե.— Իմ դարդ լե էդա է. օրըմ հ՝ելա, ազան կիտենք, հեղրմ լե իշքեմ էրկու հատ էղվընեկ թևեր զարկին հ՝իբար, հ՝իշան վըր մինարեն, առան զիս ուրանց թևերու վրեն ու տարան խաս բաղչի մը մեշ դրին։ Հ՝ըմնօր էտոնք կէրթեն կօլըրտեն, հ՝իրկոմ կդառնեն կիգեն։ Ես ասի հըմլա չէղնի, կանի էն գահ օր կհանեն զուրանց էղվընիկվենին, դնեն գետին, վերցում թալեմ կրակ, բալքեմ մեկն մնա իմ խեչ, մեկն էրթա օլըրտի, հ՝իգա։ Էդ հ՝իրկուն կրակ էրած են։ Վերցի զմեկի էղվընիկվենին, թալի կրակ։ Օր թալի կրակ, շրխրատում դրին, մեկ լե տեսնամ վերցին զիս էնտեխեն մնարի ծեր դրին։ Օրական հինգ հարիր հեղ

կելնեմ մնարի ծեր ու կիջնեմ, թե չեկա՞ն ու կդառնամ, կիջնեմ ցած։

Զմոլի դարդ լե օր հասկցան, հ՝ելան հ՝ընկան ճամբախ, Արզրմա փաշին ասեմ, տվին զուրանց բարն ու էկան։ Էկան փաշի մոտ, ասին.— Փաշա, մոլի դարդն էդա է, քում ի՞նչ է։

Փաշեն ասեց.— Իմ դարդ լե էդա է. ավուրըմ մեկ մըր էրկրի մեջ դողըմ փեչդա էղեր էր, մարդ չթողեր էդա դիով հ՝ընցներ, յոթ տարի ղավղալա էձգեր էր մըր քաղքի մեջ։ Օրըմ լե մտավ իմ խազինեն, սընտուկըմ օսկի տարավ։ Թալալ տվի կանչել, ասի. «Որն օր զէդ դող գտնա, ուր կշռանկով օսկի կիտամ ուրեն»։ Տղի մը մեկ էկավ, ասեց. «Ես ձոր գող գինամ որն է»։ Ասինք. «Ո՞րն է»։ Ասեց. «Էդա Խասընճաբասմաղ աֆանդին է»։ Ասինք. «Տղա, զձենդ կտրե, հմկա էրկնքեն կրակ կթափի, էդ Խասընճաբասմաղ աֆանդին հմալ բան իսկի կէնե՞, էն մարդ ավլըլա մարդ է, լուսմութ կէլնի ուր տնեն, կիգա, չորս մարդ հ՝առեջ կավլին, օր մոջման գլխուն չկոխե»։ Տղեն ասեց. «Օր իմ խոսկ չէլավ, զիմ գլուխ զարկեք»։ Ասի. «Մարդ է, կարելի է օղորդ էղնի, հեղըմ փորձենք»։ Տղեն ասեց. «Խասընճաբասմաղ աֆանդին օր կիգա հ՝ոդա, նշանըմ առեք տվեք զիս, ես էրթամ զգողցած բաներ զըմեն հանեմ, առնիմ հ՝իզամ»։ Լուսուն օր Խասընճաբասմաղ աֆանդին էկավ, ասի. «Հ՝էսօր գիշեր էրզի մեջ տեսա, օր իրեկ հեղ բերին ձըր տուն կերակուր դրին իմ հ՝առեջ, զարկի, զձեռքս առավ գետին, ճամբե հ՝էսօր կեսօրվա եմակ ձըր տնեն, բի ուտենք»։ Խասընճաբասմաղ աֆանդին կանչեց ուր մշկըներուց մեկ, օր ըզրկե, զատ բերե, ասի. «Դու նշանըմ տուր, մարդ կա էդա տեխ, կճամբեմ էրթա առնե իգա»։ Խասընճաբասմաղ աֆանդին հանեց զթզբեզն տվեց, ես լե կանչի գողտուտիկ, տվի տղեն։ Տղեն կէրթա Խասընճաբասմաղ աֆանդու կնկան կասե. «Աֆանդին կասե՝ զէրեկվան գիշերվա սնդուկ թըղ իտա, առ ու էկո»։ Կնիկ կիտա, տղեն կառնե, կիտա համլի մը շալակ, մեկ լե տեսնամ՝ բերեց զսնդուկ դիվնի մեջ Խասընճաբասմաղ աֆանդու հ՝առեջ դրեց։ Խասընճաբասմաղ աֆանդին զսնդուկ օր տեսավ, մոթներ սեցան, էղավ խուսի-էրկաթ, մնաց ուր տեխ։ Ես զէդ օր տեսա, ամբ էրի՝ էրթան Խասընճաբասմաղ աֆանդու տուն յուխլամա էնեն։ Գացին յուխլամա էրին, տեսա օր յոթ տարվա մեջ ինչ թալան ու թուլան էղեր էր, հ՝ըմեն լե լցուկ էր Խասընճաբասմաղ աֆանդու տուն։ Խասընճաբասմաղ աֆանդին էր, բերի տվի շալաղչոց ձեռկ՝ ասի տարեք, զէդոր գլուխ զարկեք։ Բերի, բացի զէդ մալ ու թալալ տվի կանչել, վիրն օր մալ գացեր է, թըղ հ՝իգա ճանչնա, առնե էրթա։ Վիրն օր մալ կեր, էկան տարան, էնդոր օր տեր չէլավ՝ ես լե բերի բացի, օրական էրկու մեշոկ կըլնամ, կբերեմ գնեմ էդա տեխ, կկանչեմ ֆախիր-ֆուխարեն, կիտամ՝ կառնեն կէրթան. իմ դարդ լե էդա է։

Հըմկա դառնանք աղի վրեն։ Տղին ասի. «Դու իմա՞լ դիցար, օր իմ էրկրի գող Խասընճաբասմազ աֆանդին է»։ Տղեն ասեց. «Իմ գիրկ նշանց տվեցց»։ Ասի. «Քու գիրկն հ՚ու՞ր է, ա»։ Ասեց. «Հանդե իմ տոպրկի մեչ»։ «Գնա բի տեսնամ»։ Գնաց առավ էկավ. բացի տեսա, օր գլուխըմ։ Ասի. «Տղա, քու գիրկն էդա՞ է, էդ ինչ գլուխ է»։ Ասեց. «Իմ կնկա գլուխն է»։ «Իմա՞լ քու կնկա գլուխն է»։ «Իմ կնկա գլուխն է, ես կնիկըմ առեր ինք, էդի փառչըմ էր բերի ուր հոր տնեն ուր հետ, իմալ էղավ, օրըմ կտանե ջրու, կքիսնի քար, կկոտրի։ Հ՚իրկուն դառցա էկա շուկից տուն, տեսա օր զմատեն էրեր է ու մալուլի, նստի։ Կնիկ, ասի, աստված զխերն էնե, զքու մաղեն հ՚որի՞ն իս էրի։ Ասեց՝ մարդ, իմ հոր տան փառչ կոտրեր է, էնոկի զիմ մաղեն էրեր իմ, էլ հըմալ փառչ հ՚ուստե՞ն մըր ձեռկ կկպի, օր զմըր նամուս պահե, դուրս չհանե։ «Կնիկ,— ասի,— էդո՞ր համար իս զքու մատեն էրի, չէղավ, լուսուն կէլնեմ կէրթամ քու հոր տուն, կառնեմ փառչըմ, կիտամ քզի»։ Պառկանք քնանք, հ՚ելանք լուսուն, տվի զճամբախ հ՚առեջս ու գացի։ Գացի ճամբու հետ, հալվորըմ հ՚ռաստ էկավ։ Ասեց. «Հ՚ո՞ւր կէրթաս»։ Ասի. «Ֆլան գեղ, յախուտ ֆլան քաղաք»։ Էղանք հ՚ընկեր, քիչըմ գացինք, հալվորն հ՚իսնե հարցուց, ասեց. «Հ՚որի՞ կէրթաս»։ Ասի. «Ալ ու քեֆյաթ հըմլա է, իմ կնիկ փառչըմ բերեր էր ուր հոր անեն, կոտրեր է, ուրիշ փառչ չառնե ուր ձեռկ, իլայի, կասե՝ իմ հոր տան փառչ պետկ է էղնի, օր զմըր նամուս պահե, դուրս չհանե»։ «Բիլմազ մարդ,— ասեց հալվոր,— քու կնիկ դոսթի տեր է, զքզիկ խաբեր է, ձըր էրկիր ըրուդ չկե՞ր հ՚որինն»։ «Ջանըմ,—ասի,—ի՞նչ կասես, իմ կնիկ հայով, նամուսով կնիկ է»։ Հալվորն ասեց. «Բան չըմ ասի, ես ու դու շահատըմ բռնիք, էրթանք, օր իմ խոսք չէղավ, զիս մորթե»։ Ես էմլե անկաճ չէրի, քիչըմ տեխ գացինք, հալվորն ասեց. «Բիլմզութեն մ՚էնի, էկո դառնաք էրթանք»։ Ասի հալբաթ էդա մարդ բանըմ զինա, դառնաք էրթանք, օր էն մարդու խոսք չհ՚ելավ, մեկ լե կդառնամ կիգամ, էրթամ իմ աներանց տուն, առնեմ փառչըմ, հ՚իգամ։ Գառցանք էկանք, մըր գեղին մոտեցանք, գացինք ես ու հալվորն մըշ բըլերուն պատըվտանք։ Հ՚իրկուն օր էղավ, հ՚ելանք գացինք վըր իմ հ՚երդրկին։ Զհ՚երդիկ ծըրպեցինք, տեսանք օր, օղորդ, հալվորու խոսքն է։ Իմ կնիկ բերեր է զսուֆրեն փռի, զրռաղու շուշեկ դրի վըր սեղնին, կարմիր ֆինոն դրի գլուխ, ծամեր սրսրի վըր միշաց, զերեսներ դեղ դրի ու նստիր է էրկու ջահել տղի հ՚օրթալախ. մեկ կըլնա, կիտա էն տղեն, մեկ՝ էն տղեն ու էնդոնք լե կդառնան մեկ-մեկ պագ կառնեն, մեկ էն հ՚երսեն, մեկ էն հ՚երսեն։ Զհտլվորն դրի ճամբախ, գնաց։ Հ՚իշա էկա դուռ։ Զարկի զդուռ, ասի. «Կնիկ, զդուռ բացց»։ Դռան տարզընվեր կիշքեմ, օր բերեց զէրկու դոսթ, պատըվտուց ու էկավ զդուռ բացեց։ Մտա ներս, գացի դոսթերու

պատրվտուկ տեխի վրեն։ Ասի. «Հ'ելեք գացեք, ձրզիկ մարդ բան չասեա։ Չէնդոնք հանի ճամբեցի։ Քաշեցի զդանակ ու էկա իմ կնկա բոլոր, բռնի թալի գետին, թութնի պես մանդրեցի, դրի գետին, զգլուխ լե կտրի դրի տոպրկի մեջ, թորկի հ'ելա էկա էդա քաղաք։ Հ'էնօր օր տեսա խասընճաբասմաղ աֆանդու կետի շաթն, ասի՝ վալայի, էդա իմ կնկան բան կիգա։ Դու լե օր թալալ տվեցիր կանչել, թե որն օր հ'իգա զիմ սնդրկի գող ցուցու, ուր կշռանքով օսկի կիտամ, ես գիցա խասընճաբասմաղ աֆանդուց զատ մարդ չէր քու գող, էկա ցուցուցի։

Չէդ օր ասեց, փաշեն ասեց տղեն.— Հալալ էղնի իմ էրկու հարիր օսկին քզիկ, դը գնա քու ճամբու հետ։

Էն գնաց ուր ճամբու հետ, փաշեն լե ուր ճամբու հետ, փրթան հ'իբարուց աղատան։

Աստծուց հ'իշավ իրեք խնձոր, մեկ ասողին, մեկ լսողին, մեկ լե անկաճ էնողին։